«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՌԱԴԻՈԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՄԱԼՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հանրային հեռուստառադիոընկերության խորհուրդը հայտարարում է «Հայաստանի հանրային ռադիոընկերություն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրենի թափուր պաշտոնի համալրման համար մրցույթ:

Մրցույթին կարող է մասնակցել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, ով լրագրության, իրավագիտության և/կամ հեռուստառադիոհեռարձակման կառավարման բնագավառում հեղինակավոր և որակյալ մասնագետ է, գիտության, մշակույթի և/կամ արվեստի գործիչ, ունի բարձրագույն կրթություն և տիրապետում է հայոց լեզվին:

Մրցույթին մասնակցելու համար ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը՝

ա) դիմում,

բ) անձնագրի պատճեն,

գ) բարձրագույն կրթությունը հաստատող փաստաթղթի պատճեն,

դ) ինքնակենսագրություն (մանրամասն),

ե) մասնագիտական գիտելիքներն ու գործնական կարողությունները հավաստող այլ փաստաթղթեր (գիտական աշխատություններ, հրապարակումներ կամ դրանց ցանկը),

զ) երկու լուսանկար՝ 3x4 չափսի:

Փաստաթղթերը մրցույթի կազմակերպման և անցկացման հանձնաժողովի քարտուղարին են ներկայացվում մրցույթի անցկացման մասին զանգվածային լրատվության միջոցներով հայտարարմանը հաջորդող տասն օրվա ընթացքում (բացառությամբ շաբաթ և կիրակի օրերի) ժամը 11:00-ից մինչև 17:00, Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Ալեք Մանուկյան 5 հասցեով (հեռ. 010-57-85-02, 091-425-722): Նշված ժամկետից հետո ներկայացված փաստաթղթերը չեն ընդունվում:

Մրցույթի կազմակերպման և անցկացման ժամանակավոր հանձնաժողովը մրցույթի մասնակիցների փաստաթղթերն ընդունելու վերջին օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում ուսումնասիրում է մրցույթի մասնակիցների վերաբերյալ փաստաթղթերը և որոշում է կայացնում մրցույթում հաղթող ճանաչելու մասին: Անհրաժեշտության դեպքում, մինչև մրցույթի հաղթողի վերաբերյալ որոշում կայացնելը, հանձնաժողովը կարող է մրցույթի մասնակիցների հետ անցկացնել հարցազրույց: